

Երկրաշարժի հետևանքով անօթեւան մնացած ընտանիքների բնակապահովմանն ուղղված միջոցառումների մասին

1. 2001 թվականին ընդունված ՀՀ օրենքով հաստատված աղետի գոտու վերականգնման համալիր ծրագրով պետական պարտավորություններ ձեւավորվեցին ՀՀ Շիրակի, Լոռու, Արագածոտնի եւ Տավուշի մարզերի բնակավայրերում բնակարանային խնդիրների լուծման կարիք ունեցող 14920 ընտանիքների նկատմամբ:

Ձեւավորված պարտավորությունների դիմաց 2001-2008թթ. ընթացքում ֆինանսավորման բոլոր աղբյուրների հաշվին իրականացված ծրագրերի շնորհիվ 14920 ընտանիքներից 13347-ը բարելավել են իրենց բնակարանային պայմանները, այդ թվում ի հաշիվ՝

- պետական միջոցների - 2 282 ընտանիք
- ԱՄՆ կառավարության (USAID) - 6 596 ընտանիք
- ԸԼԻՆՍԻԻ հիմնադրամի - 4 126 ընտանիք
- Հայաստանի համահայկական հիմնադրամի - 28 ընտանիք
- Ջոն եւ Կարեն Հանցմանի հիմնադրամի - 64 ընտանիք
- համայնքային միջոցների - 251 ընտանիք

2. Երկրաշարժից հետո 20 տարի անց դեռեւս անօթեւանի կարգավիճակում գտնվող անձանց բնակարանային խնդիրների լուծման հետ կապված հարցերը կարգավորվել են ՀՀ կառավարության 2008 թվականի հունիսի 12-ի նիստի N23 որոշմամբ հավանության արժանացած հայեցակարգով:

Հայեցակարգի դրույթների համաձայն մինչեւ 2013 թվականը նախատեսվում է լուծել աղետի գոտու բնակավայրերում երկրաշարժի հետևանքով անօթեւան մնացած ընտանիքների վերահաշվառման գործընթացի արդյունքներով հաստատված ցուցակների համաձայն 6930 ընտանիքների բնակարանային խնդիրները, այդ թվում՝

- քաղաքային բնակավայրերում – 4 754, *որոնցից Գյումրիում՝ 3996*
- գյուղական բնակավայրերում – 2 176

3. Հայեցակարգով սահմանված բնակապահովման ուղղությունների համաձայն մինչեւ 2013 թվականը 6930 անօթեւան ընտանիքների բնակարանային խնդիրները նախատեսվում է լուծել՝

- բնակարանների գնման վկայագրերի միջոցով -1308 ընտանիքների, *որոնցից Գյումրի քաղաքում՝ - 996 ընտանիքների*
- շինարարության ծրագրերի միջոցով - 5622 ընտանիքների, *որոնցից Գյումրի քաղաքում՝ - 3000 ընտանիքների*

4. ՀՀ 2009 թվականի պետական բյուջեով նախատեսված հատկացումների հաշվին իրականացվող ԲԳՎ (2860.0 մլն.դրամ) եւ բնակարանային շինարարության (770.0 մլն.դրամ) ծրագրերի շրջանականերում նախատեսվում է երկրաշարժի հետեւանքով անօթեւան մնացած 723 ընտանիքների հնարավորություն ընձեռել հոգուլու իրենց բնակարանային խնդիրները:

I. ԲԳՎ ծրագրի շրջանակներում - 515 ընտանիքների, որոնցից՝

1. Բազմաբնակարան բնակարանային ֆոնդում բնակարան կորցրած – 289 ընտանիքների, *այդ թվում՝*

- ք.Գյումրի - 212
- ք.Մարալիկ - 3
- ք.Վանաձոր - 55
- ք.Ստեփանավան - 5
- գ.Գուգարք - 7
- ք.Դիլիջան - 7

2. ՀՀ Շիրակի, Լոռու եւ Արագածոտնի մարզերի գյուղական բնակավայրերում (10 եւ պակաս անօթեւան ընտանիքներ ունեցող համայնքներ) անհատական բնակարանային ֆոնդում բնակելի տուն կորցրած 226 ընտանիքների,

այդ թվում՝

- ՀՀ Շիրակի մարզ (31 համայնք) - 110
- ՀՀ Լոռու մարզ (10 համայնք) - 47
- ՀՀ Արագածոտնի մարզ (16 համայնք) - 69

II. Բնակարանային շինարարության ծրագրի շրջանակներում – 208 ընտանիքների

- ք. Ստեփանավան (380.0 մլն. դրամ հատկացումների հաշվին Դեսինի փող. թիվ 45 եւ 47, Պրոմեթեւս փողոցի թիվ 28 եւ 49 անավարտ շէնքերի կառուցում) - 48
- գ.Ծաղկահովիտ (240.0 մլն.դրամ հատկացումների հաշվին գյուղի N5 բազմաբնակարան շէնքի վերականգնում) - 50
- ք.Մարալիկ (150.0 մլն.դրամ հատկացումների հաշվին 9 անավարտ շէնքերի կառուցում՝ մեկ անձից բաղկացած անօթեւան ընտանիքների համար) - 110

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

ՀՀ 2009 թվականի պետական բյուջեով նախատեսված հատկացումների հաշվին փախստական ընտանիքների բնակապահովման ծրագրի մասին

ՀՀ 2009 թվականի պետական բյուջեով նախատեսված 815.0 մլն. դրամ հատկացումների հաշվին իրականացվող ԲԳՎ եւ բնակարանային շինարարության ծրագրերի շրջանակներում նախատեսվում է 64 փախստական ընտանիքների հնարավորություն ընձեռել հոգուլու իրենց բնակարանային խնդիրները:

I. ԲԳՎ ծրագրի շրջանակներում (65.0 մլն.դրամ) –14 ընտանիքների , որոնցից

- ՀՀ Տավուշի մարզում - 10
- ՀՀ Վայոց Ձորի մարզում – 4

II. Բնակարանային շինարարության ծրագրի շրջանակներում (750.0 մլն.դրամ)-
Երեւան քաղաքի Մոլդովական 70/1 եւ Տերյան 107 հասցեներում բնակվող 50 ընտանիքների: